

• ՅԵՐԻՏԳՐՈՂՆԵՐԻ ՍԵՐԻԱ •

ՂԵՎՈՆԴ ԿՈՍՏԻՆԻ

ԽՆԴՈՒԹՅՈՒՆ

• Պ Ե Տ Հ Ր Ա Տ •

891.99

Կ-68

6 NOV 2011

№ 13

ՅԵՐԻՏ ԳՐՈՂՆԵՐԻ ՍԵՐԻԱ

№ 13

891.99

468

այ.

ՂԵՎՈՆԴ ԿՈՍՏԻՆԻ

Խ Ն Դ Ո . Ի Թ Յ Ո Ի Ն

ԲԱՆԱՍԵՂՇՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1008  
344/8

Պ Ե Տ Դ Ր Ա Տ

1982

Յ Ե Ր Ե Վ Ա Ն

Գրեալիս նվիրում եմ՝  
Հարվածայի՛ն բանվորուհի  
Յեկ անչափ սիրելի մայրիկիս՝  
Շողակաբ Մելեռնյանին.

Գ. Կ.

Ու գլխում ե կյանքիս դարունը,  
Գալիս ե համբու ամառը հասուն,  
Ինչպես կարկաչով փոքրիկ առուն եր—  
Հորդ ու վարարուն գետին ե հասնում:

Խ Ն Դ Ո Ւ Ք Յ Ո Ւ Ն

Ծիծաղեցին վոսկեզույն  
Լույսի խուրճերը բոլոր,  
Ինչպես ծովի մեջ անհուն,  
Թափանցեցին սիրտս խոր:

Յեվ խնդությունն անհատակ  
Ու թրթուամը սրտիս,  
Վորպես հուրը կաթ առ կաթ  
Իմ քնարը ներկեցին:

Յեվ այտերից իմ՝ պուրպուր  
Վազեց ժպիտն իմ կյանքի  
Ու մատներով իր հուր—հուր  
Խփեց լարին իմ սրտի:

Ու իմ քնարը խնդուն  
Իր խոհերով կրակոտ,  
Վառեց յերգերն իմ սրտում  
Ինչպես անիվը դարձող:

Ո՛հ, ժպիտներ իմ առատ,  
Համբուրեցեք անիվին,  
Վոր հոսե ու հորդանա  
Խնդությունը իմ յերգի:

ՅԵՐԳ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Յերբ հուրհուրան արշալույսն և լուսավառվում  
Ու շչակները յերգելով կանչում են մեզ  
Դեպի դադդյա՜հ, դեպի յերկաթն ենք շտապում .  
Ձե վոր հիմա յերկաթ խինդով հուզված ենք մենք :

Ո՛հ, հաղարի հույզերն են մեր սրտում վառվում  
Ու ջրտնաթոր դործում ենք մենք ամեն վայրկյան .  
Մեր բազուկներ—սողապատակուռ, ել չեն հոգում ,  
Յերբ կոփում ենք լուսապայծառ մեր ապառան :

Յեվ փոփում և մեր դեմքերին ժպիտը վառ  
Ու խինդով լի աշխատում ենք ամեն վայրկյան .  
Տոն ենք տալիս դադդյահներին յրկաթակուռ  
Ու յերկաթից կտում որերը հաղթական :

Այս որերի խնդությունն և միշտ մեր հոգում  
Ու փոթորկող ալիքները մեր պայքարի  
Յեվ ծփում են հույզերը մեր ու հորձանքում—  
Ո՛հ, հզոր և, քաղցր և տեմպը աշխատանքի :

Յեվ հուրհուրան արշալույսն և լուսավառվում  
Շչակները զրնդալով կանչում են մեզ .  
Դեպի դադդյա՜հ, դեպի յերկաթն ենք շտապում ,—  
Ձե՞ վոր հիմա յերկաթ խինդով հուզված ենք մենք :



Կարկաչում են հույզ ու ծիծաղ,  
Գործարանում ցնծությունն և .  
Սյնտեղ հոսուն թափ ստացան  
Ու յերգերն իմ, խնդությունն իմ :

Այնտեղ կովի սրայան դրինք,—  
Լափեց սիրտս խնդուն մի բոց,  
Իարձա մարտիկ մի խնդուատրիկ—  
Յյն բանակում հաղթանակող :

Ու յերկաթին դարձա ընկեր  
Ու սարուրեց հուրն իմ հողին .  
Գլորվեցին ջինջ կաթիլներ—  
Գրտինքները իմ թանգազին :

Ու գլուխս խինդս առու,  
Հոսուն խինդն իմ յերկաթալար,  
Ու փայլեցին վառ այտերս,  
Ժպիտներով բրտնդավառ :

Յեվ ժամերը զրնդացին,  
Յեվ գլորվեց դունդն արեվի—  
Յեվ բացվեցին որերը ջինջ  
Պայքարի ու հաղթանակի :

1929 թ.

Յ Ե Ր Կ Ա Յ Ի Ո Ր Ե Ր

Յերկաթը զնդաց մեր յերկրում ուժգին,  
Ու կրկին հողմեց թափանիվն ուժի...  
Որեր իմ լուստտ, յերկաթը կրկին  
Բարձրացավ, ցրեց սեւ ջրը մուժի:

Յեւ լուսավարար շառաչը յերգիս  
Ձեզում ե, վոնց վոր դարունը հիմա.  
Իմ որեր ծաղկուն, բացվում են կրկին,  
Ինչպես վարդերը նոյեմբերական:

Սիրտս ցնծում ե, վոնց զնգուն Ձանգուն,  
Հուշերն են դարձնում արյունոտ մարտի,  
Յեղնում ե նորից դրոշն արնագույն  
Յեւ հաղթանակը հզոր յերկաթի:

Թռչում են որերը, սանձաթող ե ձին—  
Ու գալարվում ե իռչին ավտոյի,  
Մի նոր խնդություն պարուրել ե ինձ,  
Հույզերը սրտիս փոխել հրդեհի:

Ահա ծաղկել ե դարունդ ժպտուն,  
Յեւ զլզլում են յերգերից վճիտ—  
Յերկիր իմ անուշ, ջահել ու ծաղկուն,  
Դու կարկաչում ես յերգերիս միջից:

1929 թ.

\*\*\*

Ուզում եմ, սիրտ իմ,  
Վոր լինես խրոխտ,  
Իմ մուրճի պես պինդ  
Ու նույնչափ գերող:

Ուզում եմ յես քո  
Արյունի պես վառ,  
Հոսել քրտինքով  
Տոկուն ու համառ:

Ուզում եմ հնչե  
Կարկաչը յերգիս...  
Ու սիրտն իմ շնչե,  
Տեմպերով յերկրիս:

Ուզում եմ արնով  
Քնարս ներկել,  
Կռել ու կռել  
Մարտական յերգեր:

1930 թ.

ԻՄ ԿԱՌՈՒՅԱԾ ՏՈՒՆԸ

Յես մտա շարվող աղյուսներէ մեջ—  
Այնտեղ փոշի կար, և խինդ և կռիւ,  
Այնտեղ, այդ կռիւ փոշիներէց ել  
Յեշնում եր վորմը, վորմի՛ յեռակց:

Յես արդեն տներէ կառուցման կռիւց  
Վերցրի խոհեր ու սեր, ու ծիծաղ  
Յեւ այդ «քարերը» նրանք տվեցին,  
Վորոնցից մեկ որ յես մուրճ ել առաւ:

Առա մուրճը յես, տաշեցի նրանց,  
Տվեցի այն ձեն՝ ինչ մուրճս ուղեց,  
Հետո այտից իմ քրտինքը դնայ—  
Ու շենքիս համար ցեմենտ չաղախեց:

1931 թ.

Հ Ն Գ Ա Մ Յ Ա Կ Ի Յ Ե Ր Գ

(ՊՍՏԱՆԵԿԱԿԱՆ)

Յես զինվել եմ գրքերով,  
Հնդամյակի յերգերով.  
Հնդամյակ իմ արև, յե՛լ,  
Յես ուզում եմ քեզ յերգել...

Արևը շող է թափում,  
Մանձում մկան ու ճակատ,  
Հնդամյակից է կաթում  
Մնդությունը մեր առատ...

—Հնդամյակ իմ արև, յե՛լ,  
Յես ուզում եմ քեզ յերգել:

Իմ հայրիկի ճակատից  
Բրտինքն հոսում է առատ,  
Ինչքան ուզի թող կաթի—  
Իմ բազուկը կամրանա:

—Հնդամյակ իմ արև, յե՛լ,  
Յես ուզում եմ քեզ յերգել:

Իսկ իմ սիրտը պատանի—  
Վառվում է նոր մի կռիւով,  
Գուզեմ դառնալ ուղարնիկ,  
Մանեկ հնոցը վառվող...

Թող ծիծաղունն իմ այտից—  
Վազենն գնդերը շողուն,  
Ու իմ սիրտը գնդերից  
Վառե յերգ ու խնդություն:

—Յես հուզվում եմ գրքերով,  
Հնգամյակի յերգերով...  
Հնգաթե իմ արև, յե՛լ,  
Յես ուզում եմ քեզ յերգել:  
1930 թ.

Յ Ե Ղ Բ Ա Յ Ի Ս

Իմ սերելն ընկեր—յերկտասարդ բան—  
Վոր կոմունիստ Բաղալի հիշատակին:

\*\*\*

Են որերը յերգ տվին,  
Յերգի հետ դործի մի սեր  
Ու սերն իմ ասավ—«գլխի՛ր  
Որերի թափը վսեմ»:

Ի՞նչ հախուռն եր են տարին—  
Կռիվ եր ու խնդություն.  
Յերկաթն եր հրում դարին  
Ու կռվի յերգ եր թնդում...:

Մեր բանակը են գարուն  
Յերիլ եր նոր պայքարի.  
Աչքերում խինդ ու արյուն—  
Կռվում ելինք կատաղի:

Մեր տղերքը վաչտ առ վաչտ  
Դիրքից դիրք ելին վաղում,  
Մեր դեմ յերկաթն եր կանգնած—  
Մեզ հետ յեռանդ ու ցատում:

Յեվ մեր թախած յեռանդով—  
Թշնամու սիրտը վառինք,  
Բայց այդ կռվում բորբոքվող—  
Մեր վաչտից մեկը տվինք:



Յես բռնեցի մի դրոշ—  
Հերոսական մի պատի,  
Դրոշակին դրելով—  
«Կռան, նորե՛րը կռան»:

Հետո մյուս առավոտ—  
Յերբ դիմը մտանք մենք կրկին,  
Դիրքերում այդ փառավոր  
Տեսա յեղբորը՝ կողքին:

1931 թ.

Վ Ե Ր Ա Դ Ա Ր Ձ

Յեկա, վոր այստեղ ձեզ համար այսօր,  
Հրեղեն խոսքեր կռեմ ու խնդում,  
Լսեմ հաղթական մարտի ցնծություն,  
Տեղեմ շարքերը ձեր հորապօր:

Վ. ՏԵՐՅԱԼ

1.

Այնտեղ թողել եմ կովի բանակներ,  
Այնտեղ տոնել եմ յես մի հարսանիք,  
Այնտեղ կարմիր եմ ջնարս ներկել  
Յերել եմ ծանր մի հաղթարշավի:

Բայլել եմ դանդաղ Դոնի վրայով,  
Սնիվների հետ յերգեր եմ յերգել.  
Յեկ Դոնի նման ծանր, հորձանքով  
Ձեզ ել իմ սրտի ծիծաղն եմ բերել:

Յերեկ լսեցի անուշ կովի յերգ՝  
Նավթի շառաչը Բիբի Հեյբաթի,  
Ահա այդ կովի ոտմբերի հետ—  
Նավթով դրեցի սողերն իմ յերգի:

Այսօր շնչեցի ժայռերի ողբ,  
(Գնարս հնչեց լեռների վրա),  
Նրանց պես բարձր, սրասց պես  
խրոխտ—  
Յերգերս կրկին պիտի հուրհուրան:

Բերել եմ խնդում, բերել եմ կարոտ,  
Բերել եմ կռիվ ու կովի յերգեր.

Ու ժայռն և թնդում սարում  
քարքարոտ,  
Բերել եմ ժայռեր կործանող մուրճեր:

2.

Այստեղ յես թափել եմ քրտինք  
Ո՛ր, վորքան անուշ և հիշել...  
Գրտինք իմ, կաթի՛լ իմ, ընկեր—  
Թող հառնեն ու վառվեն հուշերս:

Ու կարմիր, կարմիր բոցերում,  
Ծիծաղի՛ր, ուրախ իմ դազգյա՛հ.  
Ո՛ր, սիրտս անսանձ և, չլուռում  
Ոոսում են կարոտն ու խանդը:

Են ջահել արևը ծիծաղող,  
Վառվող կռիվը ստեպների,  
Մղել են հզոր մի խանդով,  
Կարոտով դեպի դազգյա՛հիս:

Ու տվել են հզոր մի կրթով,  
Վոր բերեմ իմ մարտիկ ընկերներին,  
Իմ գրիչն հրկիզել են հրով...  
Ընկե՛ր իմ, իմ սրտի պես խփի՛ր...

Ձեզ տվել են ծիծաղ, ծիծաղ,  
Ու կռիվների հրավեր,  
Վոր ձեր վաշտերով խնդու՞թյամբ  
Նոր Պերեկոպը գրավեք:

—Վողջու՛յն, իմ կռիվ ընկերներ  
Յեվ իմ աշխատանք թանգազին.  
Վողջու՛յն ձեզ, յերկաթ հարվածներ,  
Վողջու՛յն փաթիլներին բամբակի:

1931 թ.

Ա Ռ Ո Ի

Ես սարի սրտից  
Ոոխոջունն ու հեղ—  
Վազում ես առու  
Իմ յերգերի պես:

Իմ յերգերն անդուլ  
Գնում են ցողեն  
Սրտերը խնդուն,  
Վոր վառեն խոհեր:

Ծծել են նրանք  
Յերկաթների մեջ  
Ուրախության կայծ,  
Վոր մնան անշեջ:

Իսկ ջրերը քո,—  
Են կանաչ սրտից  
Հոսում են յերգով,  
Ուրախ ու վճիտ:

Վազում են սնեն  
Հասկեր ու ցողուն,  
Յերգելով ջրեն  
Սրտերը բեղուն:

Յե՛կ, անուշ առու,  
Համբուրենք իրար,  
Իմ յերգերն ու դու  
Կարկաչեք առաջ...

1008  
34418

Իմ յերգերը նոր  
Սիրով եմ կեղեկ,  
Վոր նոր կայծերով  
Սրտերը հուզեմ :

1930. Թ. Դեկտեմբեր.

\*\*\*

Յես սիրեցի մի աղջիկ՝  
Գիտաստղի պես հրավարս,  
Նրա աչքերը վճիա  
Ու ծիծաղը նրա պարզ :

Նրա խոսքերը հրդեհ—  
Ճառագայթի նման նուրբ—  
Յե՛վ նոր հույզեր, և նոր սեր  
Բորբոքեցին իմ սրտում :

Իր Ժպիտներն այնքան հեղ,  
Լուսափթիթ ու խնդուն  
Յե՛վ իր սրտի պես հրկեզ  
Զրնդացին իմ հոգում :

Նա իր սրտով այնքան բորբ  
Ու խոհերով հորդառատ՝  
Յե՛վ մի խանդով կրակոտ  
Փռեց խուրձերը վառման :

Ո՛հ, այդ խուրձերն արևուն  
Ու նրա սերը լուսե  
Շնչացին իմ հոգուն  
«—Լսե՛, լսե՛, ու լսե՛...»

—Ս.յս առափոտ լույսի հետ,  
Ս.յս վաղորդյան պայքարում,  
Պիտի յերգերդ հնչեն,  
Պիտի յերգես խնդուքյուն :

1930 Թ.

\*\*\*

Այս առաւմտ ծծեցի շողերը լուսե ,  
Վոր իմ սրտի բողբոջները ամբանան ,  
Ու մայիսներ ծիծաղեցին ու վարդեր .  
Ինչ անուշ է խնդությունը վաղորդյան :

Ամեն շողին ու արնաւառ լուսաբաց ,  
Իմ յերգերը խմում են կաթը յերկաթ ,—  
Լույսի կաթը , վոր խնդությամբ պարուրված  
Հոսում է լուռ , ինչպէս սիրո ճառագայթ :

Ի՞նչ անուշ է խնդությունը վաղորդյան . . .  
Այս լույսերով բազուկներս ամբացան  
Ու փրփրեց հուզվելով դետը սրտիս .  
Ի՞նչ անուշ է խնդությունը վաղորդյան :

Անցալ գիշերն ու անշունչ հեռացալ ,  
Ու ժպտացին խուրձիկները վռակեծամ .  
Յես հորդեցի յերգերս խոր ու արձակ  
Ի՞նչ անուշ է խնդությունը վաղորդյան :  
1930 թ .

Գ Ա Ր Ո Ւ Ն

Գարուն է , դարուն է ,  
Կակաչները բացվում են ,  
Հուլյերն իմ արթուն են՝  
Հուլյերն իմ հորդուն .  
Առլակները յերգում են ,  
Արտերը փխրուն են ,  
Փնչում է յերկաթե  
Տրակտորը հանդում :

Յերկիր իմ սովետի ,  
Յերկիր իմ պայծառ ,  
Կանաչած ծիլերը—  
Ծփում են դաշտում .  
Փռված են , շարժվում են  
Շարքերով հաստատ ,  
Ինչպէս մեր բանակն է  
Կարմիր սահմանում :  
Բերկրանքը քշում է ,  
Թախծին հալածում .  
Յերկաթի թափիցը  
Վարարել է նա .  
Կակիծը մշուշում  
Յնդում է Վորչում .  
Հոսում է խինդ մի նոր  
Արտերիդ վրա :

Գարուն է, գարուն է,  
Կակաչները բացվում են,  
Հուլյերն իմ արթուն են,  
Հուլյերն իմ հորուն.  
Առվակները յերգում են,  
Արտերը փերուն են—  
Փնչում է յերկաթե  
Տրակտորը հանդում:

1929 թ.

Ճ Ա Ն Ա Պ Ա Ր Շ Ս

Կասպից ալիքը վառեց մի քուրա,  
Արեւն համբուրեց ճակատս խոհով.  
Մի ժպիտ իջավ աչքերիս վրա,  
Յես լվացվեցի խնդուլթյան ցողով:

Ու սիրտս, վորպես մի կայտառ մակուցի,  
Լողաց վաղորդյան ալիքների մեջ...  
Իմ յերգի նման վիշկան է յերգում,  
Դյուլթում են նրանց հուլյերն իմ անչեջ:

Կարկաչեց կրկին իմ սիրո առուն  
Ու մաղեց հողիս հրահուր մի սեր,  
Յե՛վ այնքան վարար է վորպես գարուն  
Նա ժպտաց, վառվեց, վոր յես ծիծաղեմ:

Ահա նա՛ մղիչը Բիրի-Հեյրաթի,  
Կարո՞ղ է առանց նավթի արբենար.  
Այդպես է աղբյուրն իմ մատաղ սրտի,  
Ներսից խիում է հաղար չատրվան:

Փառ՛մե՛ եմ ահա, եմ նոսեի Կանոն,  
Ահա հովերը լիզում են կայմը,  
Յես վորպես ճամբորդ յելել եմ վտաքի,  
Շարահած կյանքիս սերն ու հմայքը:

Ու կտրում եմ յես վերստեր ու վերստեր,  
Ինչպես արնատար յերակը մարդու—  
Ինչպես այն նավթի խողովակը սեւի,  
Անցնում է հորերն ու դեպի Բաթում:

Յե՛վ անցա առաջ, ինչպես սրընթաց  
Ողանալն ուժեղ, փայլով մետաղե.  
Յես տարա սեր, յերգ, խոհեր շալակած,  
Նոր հասունության լեռը բարձրաբերձ:

1929 թ.

ՅԵՐԳ ՇԻԴՐՈՇԵՆԻ ՄԱՍԻՆ

Յես կանգնել եմ ժայռիդ դլխին  
Ու լսում եմ շփնդը քո.  
Յե՛վ լարերիդ փայլն իմ հոգին  
Պարուրում է յերգ ու խինդով:

Ժիր ու խնդուն—  
Դու յես թնդում  
Ու դղրդում  
Այս անդնդում,  
Ու իմ յենող, մարտիկ սրտից  
Հաղարակունք խինդ է հորդում:

Այս վայրենի ժայռերի մեջ,  
Ուր չարքերի ահն եր ցնդում,  
Այժմ պտույտ,  
Շոխդ անլերջ,  
Այժմ խնդում  
Ու խնդություն:

Իրիկուններ կղան կանցնեն,—  
Իրիկուններ լուսապայծառ—  
Անթիվ լույսեր դեռ կիսուն  
Կայծերը քո արեվալառ:

Ու արևներ հաղար—հաղար  
Կղարդարեն ճակատը քո.

Վորպես հորը կարմիր կամար,  
Դեռ կծպտան ժայռի ներքո:

Միշտ կենդան  
Դու յերկաթե—  
Հուրհուր խինդով  
Նրեկտրիկ,  
Ու կղանան  
Գործարաններն—  
Ինդուստրիալ  
Ու վիթխարի

1929 թ.

## ՅԵՐԳԵՐ ՄԱՅՐԻԿՍՍ

### 1. ՄԻՆՁԵՎ ԼՈՒՅՍ

Գրում եմ յերգը, մայրիկ,  
Իմ ընկեր, կովի ընկեր,  
Իմ սրտից կարմիր-կարմիր—  
Ուղում եմ ծիծաղ թափել.  
Գրում եմ յերգը, մայրիկ:

Վերցրի ձեռքս գրիչ,  
Վոր վորդուդ սերը գրեմ.  
Ասացին գրի՛ր, գրի՛ր,  
Վոր մայրդ շատ է սիրել—  
Վերցրի ձեռքս գրիչ:

Հոսեցին զուլալ, զուլալ—  
Իմ սրտից հույզի գնդեր,  
Խնդության յերգեր յեյան  
Ու յեյան կովի յերգեր—  
Հոսեցին զուլալ, զուլալ:

Լուսացավ արդեն, մայրիկ,  
Յեզ պետի գործի գնանք,—  
(Ինչ սիրտ է տված մարդին  
Արեվի նման զվարթ).—  
Լուսացավ արդեն, մայրիկ:

Իմ մատաղ գրչով, մայրիկ,  
Կարեցի գիշերն անցա՛.

Ահա և փունջը լույսի  
Յեվ գիշերն այս լուսացալ։—  
Իմ մատաղ գրչոյ, մայրիկ:

Լուսնին ել ճամբու դրի,  
Ծիծաղով ուրախ, ուրախ,  
Ասում եր՝ գրի՛ր, գրի՛ր,  
Յերգերդ կովի համար.  
Լուսնին ել ճամբու դրի:

Արեւը ժպտաց արդեն,  
Ո՛ր, ծիծաղ, անուշ ծիծաղ.  
Գրտինքը կաթեց այտիդ  
Յերգերիս նման զուլալ.—  
Արեւը ժպտաց արդեն:

1930 թ.

2. Մ Ա Յ Ր Ի Կ Ի Ս.

Շչակները դիւ ու պողպատհնչուն,  
Ամեն առաւիտո զնգում են, կանչում,  
Իմ խնդուն մայրիկ, հաղթական մայրիկ,  
Յեռում ե գործը քո հորդուն սրտում:

Քո հոնդացող աշխատանոցում  
Անթիվ դադդյահներ յերգում են, խնդում,  
Յեվ քո փոթորկվող կրծքում ալեկոծ,  
Այիքում ե մեր պայքարը հորդուն:

Գործում ես մայրիկ, գործում անդադար,  
Յեվ անխիներն են աշխուժ հոնդում,  
Հնչում ե յերգդ քաղցր, դյուլթական,  
Անհուն յեռանդով գործում ես, գործում:

Կարմիր գլխաշորը կապում ես գլխիդ,  
Լցվում ե անհուն քո սիրտը հույզով.  
Յեվ մեքենան քո ու կանչը յերգիդ  
Այս ծով ժխորը պարուրում խինդով:

Քո կամքը, մայրիկ, յերկաթ ե, յերկաթ,  
Զուլում ես պողպատ կամքին դադդյահիդ.  
Մենք ստեղծում ենք մեր պայծառ ներկան,  
Բոլորս միասին ժպտում խնդասիրտ:



Միրելի մայրիկ, դու հերոս մարտիկ,  
Յես եմ պատանի զինակիցը քո...  
Վորդիդ ել քեզ պես ձուլվում ե կյանքին  
Միևնույն կարմիր ժխտի ներքո:

1928 թ.

3. Ն Ա Մ Ա Կ

Կե՛ծ քաղաքի փողոցներում չըջեցի,  
Հյուսիսային հողմերի մեջ անհանդիստ.  
Յեվ արյունով իմ քնարը թրջեցի,  
Վոր քեզ դրեմ տրտիլունները սրտիս:

Գիտեմ, հիմա կարոտդ հուր ե արդեն  
Ու պարում ե քո կրծքի տակ մայրական.  
Գաղցը փայլով ինձ հուզում ե, վոր յերգեմ  
Ու քեզ դրեմ վորդիական մի նամակ:

Այտեղ ամեն վայրկյանի մեջ մի կռիվ  
Ու պայքարի անխիներ են պտտվում.  
Բարձրանում ե ջահել արեյն աշխարհի՛  
Աչքերի մեջ յերկաթի ծալի ու խնդում:

Այսոր իջա սանդուխդներով նրա մոտ,  
Են մեծ մարդի, են դարերի հերոսի...  
Կրկին չողաց նրա ժպտան արեվոտ—  
Սրտատրոփ սպասեցի, վոր խոսի:

Նա չխոսեց ու աչքերի միջից լուռ  
Խուրձ-խուրձ հոսեց կռիվների ճառագայթ.  
Անցան բազում ճառագայթներ իմ սրտում...  
Ահա յերան փողոցներում բանակներ...

Պուրճ-խուրճ հոսեց կարմիր մի հեղեղ,  
Շառաչեցին փողոցները յերթի հետ.  
Գնդացիք՞ ե կրճքերի տակ սրտի տեղ  
Բարախում ե, ու կուում ե կովի յերգ:

Ահա հողմերը ճեղքում ե մի թռչուն  
Ու ծեծում են քամիները պողպատին.  
Ուր ե դեպի այդ պողպատը սլանում,  
Ու՞ր ե տանում խիղախությունն իր սրտի:

Ահա մայրիկ, այդ թռչունը հողմածեծ  
Բերում ե քեզ կռիվները հյուսիսի.  
(Ինչ վոր վորդիդ լուսաբացին ե ծծել,  
Ինչ վոր նրան տվել ե փունջը լույսի):

Այս առավոտ ծխերի մեջ բարձրացող  
Հերոսական քո պատկերը տեսա յես.  
Ինչ կրակ կար աչքերիդ մեջ լուսացող  
Յեվ ինչ հույզեր քո կրճքի տակ լճացել:

Մտա քեզ հետ ճոնչացող հարկի տակ,  
Հարվածային յերգերի մեջ փառավոր.  
Յեվ այս կովի զինվորներից ստացանք  
Ու նոր ծիծաղ, ու ջերմ յեռանդ, ու կորով!

Այս տողերը վոր կկարդաս, կամ լես,  
Առ նրանցից վորդուդ կարոտը մայրիկ,  
Կուրճքս ահա տրոփում ե արնի պես,  
Չե՞ վոր սրանք նոր կաթեցին իմ սրտից:

Իսկ թե չոր են այս տողերը կամ պակաս,  
Մտիր կրկին շոնդալից շենքի մեջ,  
Ուր անհանդիստ հոնդում ե մեքենաս,  
Այնտեղ կրկին վորդուդ կարոտը կառնես:

Բայց դեռ կդամ, կբարձրանամ սանդուխքով  
Յեվ համբույրներդ իմ այտերը կթրջեն,  
Կարոտանքով ու ծիծաղով, բերկրանքով  
Սիրտդ նորից կրակ ու սեր կչնչե:

1930 թ.

Յեւան հզոր ու հաստատուն՝  
Նետեն ուժքերն աշխարհներին :

Հրանոթները վոռնացին,  
Վորոտացին—բո՛ւժ, բո՛ւժ, բո՛ւժ,  
բո՛ւժ... ու

Ո՛ր... ո՛ր ֆֆֆ... ընկան... ու  
յերգեցին

Արյունաներկ բարեկազում :

Հետո խալար, արյուն, դիւեր,  
Հետո արև արնանման .

Նորից յերգեր, կովի յերգեր,  
Դեպի դիրքերը հրաման... » :

Լուսնի մահիկը ծիծաղեց,  
Գիշերի հուշն հուղեց նրան .  
Շողքի նման ծիծաղն հոսեց  
Ու գլխաց սրտիս վրա :

Յե՛վ ծիծաղի նման վճիտ,  
Հոսեց դիշերն են քաղաքի .  
Ու աչքերիս դաշտի միջից  
Շողաց ցնձուղն արեդակի... »

## ՅԵՐԿՐՈՐԴ ԳԻՇԵՐ

Ն Ե Վ Ա Ն

Յերեկ են ճերմակ դիշերը պատմեց,  
Թե յես բարձրացել աիկց յելել եմ .

Թե՛ յերբ են դաժան բերդը քարադեմ  
Գիրկս հրել ե արնոտ դիշերը—

Յես կատաղել եմ, փրփրակալել եմ  
Ու մոնչալով յելել եմ վոտքի .

Ուզել եմ քանդել հիմքի քարերը,  
Ուզել եմ փոխել ընթացքը վաղքիս... »

Յես ել այն որը արնով արբել եմ,  
Յե՛վ կլանել եմ ու մարդ ու մակուշի .

Հետո այն կովից սրանք յելել են  
Իմ ալիքների նման ահարկու :

Հե՛մա յես ելի անցնում, դնում եմ,  
Թեթե՛վ շոյում եմ ուրիշ պատեր ել .

Յե՛վ այդ պատերի թնդյուն ներսումը  
Սրանք կամքերը իրար են կապել :

Կամքերը սրանք, ողակ առ ողակ  
Ձուլել են իրար մուրձով վիթխարի .

Կռել են շղթա մի նալի համար,—  
Վոր գործը դառնա ինչպես մի խարխուս :

Յե՛վ նալը սրանց այսոր յելել ե,  
Կրկին ճեղքվում ե կրճքիս փրփուրը... »

Ա՛րս, սրանք, սրանք, ուժը հորդել են  
Յե՛վ նա հոսում ե ինչպես իմ ջուրը :

Յե՛վ աշխատանքով ուզում ե հալել—  
Յերկաթ ու պղինձ արյուն ու արե՛վ... »

Ուզում են այդ հուր խառնուրդից կռել  
Նոր ու ծիծաղուն Պուտիլովցիներ :

1929 թ. Լենինգրադ

## Ն Ի Կ Ի Ց Ո Ր Ը

Նրան—այդ հույն ենտուզիաստին մի գլխեր  
ձամբեցին շախտ, լեռան կուրծքը քանդելու,  
Վորպես փորձված և անձնվեր և ուժեղ  
Մի հետախույզ պղնձերակ գտնելու:

Առավ քլունդ, կարբիտի լամպ, դինամիտ,  
Մտավ խորքը՝ քարածուխի նման մուլթ,  
Նրա գլխին մազվում էր ջուր ու կարբիտ  
Լամպը նրա ճեղքում էր սղը հեղձուկ:

Անցավ այն մուլթ, յերկար ճամբան լեռան տակ,  
կանգնեց հպարտ կույր ու կարծր ժայռի դեմ,  
Լամպը կախեց, քլունդն առավ ու անհաջ  
Պղնձածույլ ժայռերի հյուսքը քանդեց:

Նա քանդում էր՝ սրտում թասիբը շախտի,  
Մի պայծառ հույս, վառող ճակատ ու մկան.  
Չէ վոր նրան ասել էր հին մի տեխնիկ,  
Թե եղ շախտում պղնձաքար էլ չկա:

—Տեսնենք, պարոն Փրանսիական կառվի դունչ,  
Տեսնենք ի՞նչ է խոսում պղինձը շախտի,—  
Մրմնջում էր դարձած կրակ, դարձած մուրձ.  
Յեւ իջնում էր մուրձը կամքի ու բախտի:

Փորեց... ծակեց քարոտ կողերը շախտի,  
Դրեց այնտեղ մի դինամիտ ու պատրույզ,

Առավ լամպը վառեց պատրույզն, վոր պայթի,  
Ինքը փախավ սպասելով հեռվում լուռ:

Գը՛ռ՛ու... դղիրդով հազաց կոկորդը ժայռի,  
Յնցվեց, դողաց, քանդեց սիրտը մի բլուր,  
Ու յեռանդով զսպած տաղնապը սրտի—  
Գորովանքով տեսավ պղինձը հուր—հուր:

Պայծառ գույնով փայլեց կոշտը պղնձի,  
Նա անսահման մի խնդությամբ ծիծաղեց.—  
—Յես հաղթեցի, յես հաղթեցի, հաղթեցի—  
Յեւ հաղթողի ժպտով ժայռը համբուրեց:

Հետո հուժկու մի հարվածով քլունդի  
Պոկեց քարի քթից «ջուհարը» կապույտ.  
Գրկեց պայծառ այն դանդվածը պղնձի  
Ու գզվանքով վաղեց շախտից դեպի դուրս:

Դուրսը վառվող առավոտ էր, չգիտեր,  
Թե լեռն արդեն ծնել է նոր մի արև.  
Ու արևը թափեց պղինձ, թափեց սեր—  
Իր խուրձերով պայծառ, դեղին, հրեղեն:

1931 թ. Ալլահվերդի.

Սրբաբերեց՝ Տ. Տիրունի

Պետհ. տպարան պատ. 2368 գր. 7582 (ը) հր № 2304 տիրած 3000

Հանձնված է արտադրութան 13 հունիսի 1932 թ.

Ստորագրված է տպելու 1 սեպտեմբերի 1932

ՀՀ Ազգային գրադարան



NL0345451

ԳՆՆԸ՝ 65 400.

36407

Դեօնձ Կոմունի  
**ՐԱԺՕՒՅՒ**

ԴԻՅ ՏՏՐ Արմենի, Զրիվան